

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական  
և վարքագծային հետազոտություն  
« քաղաքաբնակ արական սեռի սեզոնային  
աշխատանքային միգրանտների շրջանում

2018



## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունը ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում իրականացվել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից: Հետազոտության ընդհանուր համակարգումն իրականացրել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը: Հետազոտությունն իրականացրած հիմնական խմբում ներգրավված են եղել համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ Արշակ Պապոյանը, կանխարգելման բաժնի վարիչ Ժանետա Պետրոսյանը, հոգեբանասոցիալական բաժնի վարիչ Մարինե Ասրյանը, լաբորատոր ախտորոշման բաժնի վարիչ Անահիտ Ասատրյանը, բժշկ-վիճակագիր Տրդատ Գրիգորյանը, բժշկ-համաճարակաբաններ Վարդան Արզաքանյանը և Էդուարդ Հովհաննիսյանը, բժշկ-վիճակագիրներ Տիգրան Հովսեփյանը և Լիլիթ Հովհաննիսյանը, մոնիտորինգի և գնահատման մասնագետներ Սեդա Աբգարյանը և Ռուբեն Հովհաննիսյանը:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել հետազոտության ընթացքում, այդ թվում հետազոտության մասնակիցներին:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր հատուկ երախտագիտությունն է հայտնում միջազգային փորձագետ Լիզա Ջոնսթոնին հետազոտության ուղեցույցի մշակման, հետազոտության ընթացքում տրամադրած խորհրդատվության, հետազոտության արդյունքների վերլուծության և սույն զեկույցի պատրաստման համար:

Հետազոտությունն իրականացվել է ֆրանսիական 5% նախաձեռնության ֆինանսական աջակցությամբ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտություն _____	1
Հապավումներ _____	4
1. Ներածություն _____	5
2. Նախաբան և հիմնավորում _____	7
3. Հետազոտության նպատակները _____	9
4. Ընտրանքի ձևավորման մեթոդը _____	10
4.1. Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք _____	10
4.2. Ֆորմատիվ հետազոտություն _____	10
4.3. Հետազոտության տեղամասեր _____	11
4.4. Ընտրանքի չափը _____	12
4.5. Հետազոտության մեջ ընդգրկելու չափանիշներ _____	13
4.6. Հետազոտության քայլերը _____	13
4.7. Տվյալների մշակում և վերլուծություն _____	14
Տվյալների տեղափոխում _____	14
Տվյալների մշակում _____	14
Տվյալների վերլուծություն _____	14
Տվյալների պաշտպանության ապահովում _____	15
Տվյալների ներկայացում _____	15
5. Լաբորատոր հետազոտություններ _____	16
5.1. Կենսաբանական նմուշների պահպանումը և տեղափոխումը _____	16
5.2. Հետազոտությունների արդյունքների տրամադրման գործընթացը _____	16
6. Էթիկական հարցեր _____	17
7. Հետազոտության սահմանափակումներ _____	18
8. Արդյունքներ _____	19
8.1. Սոցիալ-ժողովրդագրական եվ ընդհանուր աշխատանքային բնութագրիչներ _____	20
8.2. Սեռական կյանքի բնութագրիչներ _____	22
8.3. Սեռական վարքագիծը մշտական զուգընկերների հետ _____	23
8.4. Սեռական վարքագիծը պատահական զուգընկերների հետ _____	26
8.5. Սեռական վարքագիծը կոմերցիոն զուգընկերոջ հետ _____	29
8.6. Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ _____	32
8.7. Սեռական վարքագիծը արական սեռի զուգընկերների հետ _____	32

8.8. Թմրամիջոցների գործածումը _____	33
8.9. ՄԻԱՎ-ի և սեռավարակների վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի գնահատում և պահպանակների հասանելիություն _____	35
8.10. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը _____	37
8.11. ՄԻԱՎ վարակի և այլ վարակների տարածվածությունը _____	38
9. Խմբերի չափերի գնահատում _____	40
10. Արդյունքների քննարկում _____	41
11. Հիմնական առաջարկություններ _____	44
12. Եզրակացություն _____	45
Հավելված Ա. _____	46
Քաղաքաբնակ միգրանտների սկրինինգային հարցաշար _____	46
Հավելված Բ. _____	49
Հարցաշար _____	49
Քաղաքաբնակ միգրանտների շրջանում վարքագծային հետազոտության _____	49

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱՀԿ</b>	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
<b>ԹՆՕ</b>	Թմրամիջոցների ներարկային օգտագործող
<b>ԿՍԿ</b>	Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՁԻԱՀ</b>	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
<b>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</b>	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
<b>ՄԻԱՎ</b>	մարդու իմունային անբավարարության վիրուս
<b>ՄՄՁԸ</b>	մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք
<b>ՎՄ</b>	վստահության միջակայք
<b>SUS</b>	տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում ներկայացված են 2018թ. ՀՀ քաղաքաբնակ արական սեռի 18-49 տարիքային խմբի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի մեթոդով իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները: Հետազոտությունն անցկացվել է Հայաստանի երեք խոշոր քաղաքներում՝ Երևանում (բնակչություն՝ 1,075,800), Գյումրիում (բնակչություն՝ 116, 031) և Վանաձորում (բնակչություն՝ 80, 703): Տվյալները կշռվել են յուրաքանչյուր քաղաքի համար սոցիալական ցանցի չափով և բոլոր երեք քաղաքների համար սոցիալական ցանցի չափի ու խմբի չափի տարբերությունների միջոցով: Հետազոտության հիմնական նպատակն էր պարզել ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և ռիսկային վարքագծի դրսևորումները քաղաքաբնակ միգրանտների շրջանում կանխարգելման ծրագրերի և ռազմավարությունների մշակման համար անհրաժեշտ տվյալների ստացման նպատակով:

### Արդյունքներ

Հետազոտությունն իրականացվել է Երևանի (n=300), Գյումրիի (n=300) և Վանաձորի (n=300) 900 միգրանտների շրջանում: ՄԻԱՎ վարակի (1,3%), հեպատիտ Բ-ի (0,5%) և սիֆիլիսի (0,7%) տարածվածությունն ամենաբարձրն էր Երևանում: Հեպատիտ Ց-ի տարածվածությունը բարձր էր և՛ Երևանում (3.4%), և՛ Վանաձորում (3.6%): Նշված խմբի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 1,2%, հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,6%, հեպատիտ Ց-ի տարածվածությունը՝ 3,3%, և սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,5%:

#### ՎԱՐԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲՈՒՄ

ՄԻԱՎ վարակ 1,2% (95% ՎՄ՝ 0,4- 3,5)

Հեպատիտ Բ 0,6% (95% ՎՄ՝ 0,1-2,9)

Հեպատիտ Ց 3,3% (95% ՎՄ՝ 1,5-7,1)

Սիֆիլիս 0,5% (95% ՎՄ՝ 0,1-3,3)

Հետազոտության մեջ ընդգրկված քաղաքաբնակ միգրանտների մեծամասնությունը 25 տարեկան է և ավելի բարձր տարիքի, ունի միջնակարգ կրթություն, (բացառությամբ Գյումրիի՝ 34%) և ամուսնացած է (բացառությամբ Վանաձորի՝ 43%): Քաղաքաբնակ միգրանտների 90%-ից ավելին առավել հաճախ մեկնել է աշխատելու Ռուսաստանի Դաշնություն, և կեսից ավելին աշխատել է շինարարության ոլորտում: Ամուսնացածներից 85%-ը մեկնել է աշխատելու առանց կանանց:

Քաղաքաբնակ միգրանտների 69%-ն ունեցել է սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում, որոնցից միայն 32%-ն է օգտագործել պահպանակ: Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման ցուցանիշն ամենացածրն է եղել Գյումրիի (17%), ամենաբարձրը՝ Վանաձորի միգրանտների (43%)

շրջանում, իսկ Երևանում այն կազմել է 36%: Քաղաքաբնակ միգրանտների 72%-ը Հայաստանում և 37%-ն արտերկրում ունեցել են մշտական զուգընկերներ, 29%-ը Հայաստանում և 71%-ն արտերկրում ունեցել են պատահական զուգընկերներ, 12%-ը Հայաստանում և 13%-ն արտերկրում ունեցել են կոմերցիոն զուգընկերներ:

Երբևէ Հայաստանում թմրամիջոցներ գործածելու մասին նշել է քաղաքաբնակ միգրանտների 32%-ը, իսկ արտերկրում՝ 8,1%-ը: Երբևէ Հայաստանում թմրամիջոցներ գործածած միգրանտների թիվն ամենամեծն է եղել Երևանում (34%), իսկ արտերկրում գործածածների առումով՝ Երևանում և Գյումրիում (8%): Փոքրաթիվ քաղաքաբնակ միգրանտներ են նշել երբևէ թմրամիջոցների ներարկային գործածման մասին:

Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու վայրերի մասին իմացող միգրանտները կազմել են 44%, մինչդեռ արտերկրում նման վայրերի իմացությամբ միգրանտների մասնաբաժինը զգալիորեն ցածր է՝ 11%: Ընդ որում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու վայրերի մասին իմացող միգրանտների թիվն ամենաբարձրն է եղել Գյումրիում՝ կազմելով արտերկրում 39% և Հայաստանում՝ 58%: Երբևէ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված քաղաքաբնակ միգրանտների թիվը ցածր է. Հայաստանում այն կազմել է 10%, արտերկրում՝ 9%: Վերջին մեկ տարվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվածների թիվը բավականին ցածր է. Հայաստանում՝ 3,3%, արտերկրում՝ 2,8%: Հայաստանում հետազոտվածների 2,6%-ն է իմացել հետազոտության պատասխանը, իսկ արտերկրում հետազոտվածների՝ 2,9%-ը: Հարցվածների 75%-ը բացառել է իր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը: ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 39%:

## **Եզրակացություններ**

ՀՀ քաղաքաբնակ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը 1%-ից ավելի է: Քաղաքաբնակ միգրանտներն ունեն բազմաթիվ զուգընկերներ թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում, և պահպանակների օգտագործումը չի կրում մշտական բնույթ: Սակայն շատերն են բացառում իրենց՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը: Այս ամենը վկայում է ՄԻԱՎ-ով, սեռավարակներով վարակման բարձր վտանգի և միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի ուժեղացման անհրաժեշտության մասին:

## 2. ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համաձայն ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի «Սպեկտրում» ծրագրով ստացված տվյալների՝ ՄԻԱՎ-ի տարածվածությունը ՀՀ-ում մեծահասակ բնակչության շրջանում կազմում է 0,2%, ինչը վկայում է, որ Հայաստանը դասվում է ՄԻԱՎ-ի ցածր տարածվածություն ունեցող երկրների շարքում: Այնուհանդերձ, ՄԻԱՎ-ի տարածվածությունը համեմատաբար բարձր է առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում՝ համաձայն ՄՄՁԸ մեթոդով 2016թ. նրանց շրջանում իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքների<sup>1</sup>: Ըստ այդ հետազոտության՝ ՄԻԱՎ-ի տարածվածությունն ամենաբարձրն էր տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում՝ 0,8%, թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ) շրջանում՝ 0,5%, իսկ կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ) շրջանում՝ 0,1%:

Միգրացիան կարող է մեծացնել մարդկանց խոցելիությունը ՄԻԱՎ-ի և այլ վարակների նկատմամբ առողջապահական և, որոշ իրավիճակներում, իրավաբանական և իրավունքների պաշտպանության ծառայությունների հասանելիության սահմանափակ լինելու, ընտանիքից, ամուսնուց և մշտական բնակավայրի ավանդական միջավայրից հեռանալու, լրացուցիչ սոցիալական, քաղաքական և տնտեսական բացասական ազդակների ուժեղացման հետևանքով<sup>2</sup>: Սոցիալական մեկուսացումը ևս միգրանտներին խոցելի է դարձնում ՄԻԱՎ-ի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, Հայաստանը համարվում է արտագաղթող երկիր, որտեղից միգրացիոն հոսքերն ուղղված են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն (90%)<sup>3,4</sup> և Ուկրաինա, որտեղ ՄԻԱՎ վարակի տարածվածությունը բնակչության 15-49 տարիքային խմբում կազմում է մոտ 1%<sup>5</sup>: Հայաստան վերադարձող աշխատանքային միգրանտները կարող են ՄԻԱՎ-ով վարակվել իրենց ընդունող երկրներում: Ըստ որոշ աղբյուրների<sup>6</sup> Հայաստանում

<sup>1</sup> Ministry of Health, National Center for AIDS Prevention, (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014, Accessible at: [http://ccmarmenia.am/images/uploads/bbc\\_report\\_2014\\_eng.pdf](http://ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf)

<sup>2</sup> UNAIDS/WHO. (2014) The Gap Report 2014: Migrants. Accessible at: [http://www.unaids.org/sites/default/files/media\\_asset/04\\_Migrants.pdf](http://www.unaids.org/sites/default/files/media_asset/04_Migrants.pdf)

<sup>3</sup> European Training Foundation (2011). Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development in Armenia. Accessible at: [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/projects/Migration\\_and\\_skills\\_2011/Migration\\_and\\_skills\\_Armenia.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/Migration_and_skills_2011/Migration_and_skills_Armenia.pdf)

<sup>4</sup> International Labour Organization. (2010). Migration and Development: Armenian Country Study, Yerevan. Accessible at: [http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development\\_Study\\_in\\_English.pdf](http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf).

<sup>5</sup> World Health Organization. Data and statistics. Accessed on September 12, 2015 at: <http://www.euro.who.int/en/health-topics/communicable-diseases/hiv/aids/data-and-statistics>.

<sup>6</sup> International Organization for Migration, (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: [http://publications.iom.int/bookstore/index.php?main\\_page=product\\_info&cPath=41\\_7&products\\_id=1400](http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400)



սեզոնային աշխատանքայի միգրանտների հաշվարկային թիվը կազմում է շուրջ 80000-100000, որոնցից 63,5%-ն ապրում է քաղաքային համայնքներում: Համաձայն այլ աղբյուրների՝ աշխատանքային միգրանտների մեծ մասը՝ 56%<sup>7</sup>-ը, բնակվում է քաղաքներում: Համարյա բոլոր աշխատանքային միգրանտները, որոնք վերադառնում են Հայաստան, արական սեռի ներկայացուցիչներ են: Համաձայն 2016թ. Հայաստանի վեց մարզերի միգրանտների շրջանում բազմափուլ կլաստերային ընտրանքի մեթոդով իրականացված կենսաբանական և վարքագծային հետազոտության արդյունքների՝ ՄԻԱՎ-ի տարածվածությունը նրանց շրջանում կազմել է մոտ 0,6% 18-49 տարիքային խմբում<sup>8</sup>: Սեզոնային աշխատանքային քաղաքաբնակ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածության, ռիսկային վարքագծի, ինչպես նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և առողջապահական ծառայություններին հասանելիության վերաբերյալ տվյալներ ստանալու համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն 2017-2018թթ. անցկացրեց հետազոտություն նրանց շրջանում:

Սույն զեկույցում ներկայացված են ՀՀ երեք քաղաքների՝ Երևանի, Վանաձորի և Գյումրիի քաղաքաբնակ միգրանտների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները: Հետազոտության համար կիրառվել է մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի մեթոդը ներկայացուցչական արդյունքներ ստանալու համար: Քաղաքաբնակ միգրանտների շրջանում հետազոտությունը ներառել է ՄԻԱՎ-ի, վիրուսային Բ և Ց հեպատիտների, սիֆիլիսի վերաբերյալ հետազոտությունը: Հետազոտության արդյունքները կօգտագործվեն աշխատանքային միգրանտների շրջանում կանխարգելման միջոցառումների բարելավման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ընդլայնման, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և ռիսկային վարքագծի նվազեցման համար:

---

<sup>7</sup> International Labour Organization, (2010), Migration and Development: Armenian Country Study, Yerevan, Accessible at: [http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development\\_Study\\_in\\_English.pdf](http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf),

<sup>8</sup> Ministry of Health, National Center for AIDS Prevention, (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014, Accessible at: [ccmarmenia.am/images/uploads/bbc\\_report\\_2014\\_eng.pdf](http://ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf)

### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակներն էին՝

1. Գնահատել ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ՀՀ քաղաքային համայնքներում բնակվող արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում:
2. Գնահատել միգրացիոն փորձը:
3. Պարզել խմբի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները (տարիք, ամուսնական կարգավիճակ և այլն):
4. Գնահատել ռիսկային սեռական վարքագիծը:
5. Գնահատել թմրամիջոցների գործածման հետ կապված վարքագիծը:
6. Գնահատել ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը:
7. Գնահատել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության հասանելիությունը:
8. Գնահատել խմբի շրջանում սիֆիլիսի, վիրուսային Բ և Ց հեպատիտների տարածվածությունը:

## 4. ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԸ

### 4.1. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԸՆՏՐԱՆՔ

Հետազոտության համար ընտրանքը ձևավորվել է մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի (ՄՄՁԸ) մեթոդով: ՄՄՁԸ-ն շղթայական ուղղորդման ընտրանքի տեսակ է՝ մշակված դժվարիասանելի խմբերի ընտրանք ձևավորելու համար: ՄՄՁԸ-ն սկսվում է խմբի նպատակայնորեն ընտրված մի քանի անդամներով՝ սերմերով: Հիմնվելով առկա կապերի վրա և խորհրդակցելով քաղաքաբնակ միգրանտների հետ աշխատող տեղի մասնագետների հետ՝ հետազոտությունը իրականացնող անձնակազմը ընդգրկել է թիրախային խմբի բազմազան և լավ ցանց ունեցող անդամների, որոնք կծառայեն որպես սերմեր (հետազոտության սկզբնական մասնակիցներ): Ընդգրկվելուց և հետազոտությանը մասնակցելուց հետո սերմերին տրամադրվել է հատուկ համարներով մինչև երեք կտրոն՝ խմբի այլ անդամներ ընդգրկելու համար: Սերմերի կողմից ընդգրկվող մասնակիցները կազմում են ընդգրկման առաջին ալիքը և նույնպես ստանում են հատուկ համարներով մինչև երեք կտրոն՝ խմբի այլ անդամներ ընդգրկելու համար: Ընտրանքի այս մեթոդը ստեղծում է ընդգրկման հաջորդական ալիքներ, երկար ընդգրկման շղթաներ և շարունակվում է մինչև ընտրանքի չափի լրանալը:

ՄՄՁԸ-ի տվյալների վերլուծությունը հիմնվում է յուրաքանչյուր մասնակցի սոցիալական ցանցի չափի և ընդգրկման շղթայի վերաբերյալ տեղեկատվության վրա՝ օգտագործելով կտրոնների հատուկ համարները: Հատուկ համարների օգտագործումը վերացնում է անձը բացահայտող տվյալների (անուն, հասցե և այլն) հավաքագրման անհրաժեշտությունը՝ պահպանելով հետազոտության մասնակիցների անանունությունը և գաղտնիությունը: Այն նվազեցնում է սխալները, որոնք սովորաբար հանդիպում են շղթայական ուղղորդման այլ մեթոդներում՝ կիրառելով «հավասարը՝ հավասարին» ընդգրկման սահմանափակ համակարգ (մասնակիցները կարող են ընդգրկվել մինչև երեք մասնակից՝ նվազեցնելով այն մարդկանց գերներկայացվածությունը, որոնք ունեն մեծ ցանցեր):

### 4.2. ՖՈՐՄԱՏԻՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Մինչ հետազոտության իրականացումը անցկացվել են ֆոկուս խմբային քննարկումներ արական սեռի սեզոնային միգրանտների հետ և խորը հարցազրույցներ նրանց հետ, որոնք աշխատում են և/կամ տեղեկություններ ունեն արական սեռի սեզոնային միգրանտների մասին (հիմնական իրազեկողներ) ՄՄՁԸ-ի հետ կապված հնարավոր խնդիրները հայտնաբերելու, հետազոտության ուղեցույցը ամփոփելու և

հետազոտության անցկացման պայմանները որոշելու նպատակով: Ֆորմատիվ հետազոտության ընթացքում քննարկվել են հետազոտության տեղամասերի ընտրությունը, հետազոտության ընդունելիությունը և արական սեռի սեզոնային միգրանտների ընտրությունը որպես սերմեր: Ֆորմատիվ հետազոտության արդյունքում ստացված այն եզրահանգումը, որ Գյումրիում և Վանաձորում արական սեռի սեզոնային միգրանտներն ունեն լայն ցանց, և ՄՄՁԸ-ի միջոցով ընդգրկումը հեշտությամբ կընթանա՝ ի տարբերություն Երևանի, որտեղ միգրանտները ձևավորում են փոքր ենթախմբեր և դժվարությամբ կընդգրկվեն սույն ընտրանքի միջոցով, ակնառու դարձավ տվյալների հավաքագրման ժամանակ: Թեև Երևանում հնարավոր եղավ հասնել ընտրանքի չափին, սակայն ընդգրկումն ընթացավ ավելի դանդաղ՝ Գյումրիի և Վանաձորի համեմատ:

### 4.3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ

Հետազոտվող խմբերի ներկայացուցիչներն ընտրվել են Հայաստանի երեք խոշոր քաղաքներից՝ Երևան (բնակչությունը՝ 1,075,800), Գյումրի (բնակչությունը՝ 116, 031) և Վանաձոր (բնակչությունը՝ 80, 703) (գծապատկեր 1):

**Գծապատկեր 1.** Հայաստանի Հանրապետության վարչական քարտեզ



Մայրաքաղաք Երևանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է, համարվում է երկրի մշակութային, վարչական և արդյունաբերական կենտրոնը: Գյումրին, որը գտնվում է մայրաքաղաքից հյուսիս, իր մեծությամբ Հայաստանի երկրորդ քաղաքն է, Շիրակի մարզկենտրոնը: Վանաձորը երրորդ խոշոր քաղաքն է Հայաստանում և Լոռու մարզկենտրոնը: Գտնվում է երկրի հյուսիսային մասում և արդյունաբերական կենտրոն է:

#### 4.4. ԸՆՏՐԱՆՔԻ ՉԱՓ

Ընտրանքի չափը հաշվարկվել է 5% սխալի սահմանով, 95% վստահության միջակայքում՝ պատասխանների բաշխումով՝ օգտագործելով միջինը 60-70%: Օգտագործելով այս փոփոխականները՝ n ընտրանքի չափը և E սահմանային սխալը՝ տրվում են.

$$x = Z(c/100) \sqrt{2r(100-r)}$$

$$n = N \times x^2 / ((N-1)E^2 + x^2)$$

$$E = \text{Sqrt} [(N - n)x^2/n(N-1)]$$

Որտեղ՝

N-ը խմբի չափն է,

r-ը՝ պատասխանների մասը, որը հետաքրքիր է,

Z(c/100)-ը կրիտիկական արժեքն է c վստահության մակարդակի համար:

Այս հաշվարկների հիման վրա քաղաքաբնակ միգրանտների ընտրանքի չափը յուրաքանչյուր քաղաքում սահմանվել է 300:

Ընտրանքի վերջնական չափերը յուրաքանչյուր տեղամասի համար ներկայացված են աղյուսակ 2-ում:

#### ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԸՆՏՐԱՆՔԻ ՉԱՓԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ

Տեղամաս	Միգրանտների խմբի հաշվարկային չափ (փորձագիտական կարծիք)	Ընտրանքի չափ
Երևան	50000	300
Գյումրի	11000	300
Վանաձոր	7600	300
	<b>Ընդամենը</b>	<b>900</b>

#### 4.5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ընտրանքի մեջ ընդգրկելու չափանիշներն էին՝

- արական սեռ,
- 18 - 49 տարեկան,
- աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան մեկ տարի վերջին 12 ամիսների ընթացքում) արտերկրում գտնված միգրանտ, ընտրված տարածքում բնակվող:

Բացի դրանից ընդգրկման չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր անձ, բացառությամբ սերմերի, պետք է ունենար վավեր կտրոն և տար տեղեկացված համաձայնություն հետազոտությանը մասնակցելու համար:

#### 4.6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐ

Հետազոտությունը սկսվել է չորս սերմերով յուրաքանչյուր քաղաքում: Սերմերը ստացել են հատուկ համարներով կտրոններ իրենց սոցիալական ցանցի բազմազան անդամներ ընդգրկելու համար: Հետազոտության տեղամաս գալուց հետո վավեր կտրոն ունեցող մասնակիցներն անցել են սկրինինգ և տվել տեղեկացված համաձայնություն հետազոտության մեջ ընդգրկվելու համար: Սկրինինգ անցած և հետազոտության մեջ ընդգրկված մասնակցի հետ հարցազրուցավարն անցկացրել է հարցազրույց, որից հետո նրան տրամադրվել է նախաթեստային խորհրդատվություն, և կատարվել է արյան նմուշառում ՄԻԱՎ-ի և այլ վարակների վերաբերյալ լաբորատոր հետազոտության համար: Արյան նմուշառումից հետո յուրաքանչյուր մասնակից ստացել է կտրոնների որոշակի քանակ (երեքից ոչ ավելի): Հարցման մասնակիցների գաղտնիությունն ապահովելու նպատակով վարքագծային և կենսաբանական տվյալները կապելու և ընդգրկման շղթային հետևելու համար օգտագործվել են հատուկ համարներ:

Հետազոտության մասնակիցները Երևանում ստացել են առաջնային խրախուսում (10000 դրամ) հետազոտությանը մասնակցելու համար: Մասնակիցները, որոնք ընդգրկվել են իրենց խմբի նոր ներկայացուցիչներ, հետազոտությանը մասնակցելուց հետո ստացել են երկրորդային խրախուսում (յուրաքանչյուր մասնակցի համար 3000 դրամ): Հետազոտության մասնակիցները Գյումրիում և Վանաձորում ևս ստացել են առաջնային (5000 դրամ) և երկրորդային խրախուսումներ (յուրաքանչյուր մասնակցի համար 2000 դրամ):

## 4.7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Տվյալների տեղափոխում

Բոլոր հարցաշարերը և հետազոտության ժամանակ կիրառվող այլ ձևեր ստուգվել և ուղղվել են ամեն օր համակարգողի կողմից: Բոլոր տվյալները գրանցվել են մասնակցի հատուկ համարով, և հարցման մասնակիցներին չբացահայտելու նպատակով որևէ անձնական տվյալ չի գրանցվել: Տպագիր ձևերը պահվել են միայն հարցազրուցավարին հասանելի ապահով փակվող պահարանում:

### Տվյալների մշակում

Հետազոտության տվյալները մուտքագրող մասնագետը մշակել է հարցաշարերի տվյալների բազան և ղեկավարել է տվյալների կրկնակի մուտքագրման և համաձայնեցման համար պատասխանատուներին: Տվյալները մուտքագրվել են ամեն օր տվյալների որակն ապահովելու համար: Սխալները և բացակայող տվյալները նույնպես ստուգվել են՝ դրանք համեմատելով հետազոտության տպագիր հարցաշարերի հետ: Հարցման տվյալները և լաբորատոր հետազոտությունների արդյունքները գրանցվել են մասնակցի հատուկ համարով: Չլրացված յուրաքանչյուր տվյալ ստուգվել է՝ հետազոտության հարցաշարերի հետ համեմատելով:

### Տվյալների վերլուծություն

Տվյալները կրկնակի մուտքագրվել, համեմատվել, անհամապատասխանությունների դեպքում ուղղվել, մաքրվել և կոդավորվել են: Որակի ապահովման պատասխանատուն եղել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն, որը մշտապես հետևել է տվյալների հավաքագրմանը՝ կտրոնների սխալ համարները, համընկնումները և այլ սխալներ ժամանակին հայտնաբերելու համար: Հայտնաբերված խնդիրները ներկայացվել են համապատասխան տեղամասի համակարգողին անմիջապես ուղղելու համար: Տեղամասին հատուկ և ամբողջ խմբի ունիվարիատ/բիվարիատ վերլուծություններ են կատարվել՝ օգտագործելով հաջորդական ընտրանքային չափման գործակիցը RDS Analyst ծրագրում ([www.hpmsg.org](http://www.hpmsg.org)): Յուրաքանչյուր ընտրանքի ընդգրկման շղթաների գծապատկերները կազմվել են՝ օգտագործելով NETDRAW in UCINET 2.15 for Windows (<http://analytictech.com/ucinet/download.htm>): Հաշվարկային թվերը հետազոտության յուրաքանչյուր տեղամասի համար կշռվել են յուրաքանչյուր տեղամասի բնակչության թվին համապատասխանող խմբի չափով բոլոր տվյալների համար միասնական արդյունքներ ստանալու նպատակով:

---

## **Տվյալների պաշտպանության ապահովում**

Հարցազրույցների և լաբորատոր հետազոտությունների ժամանակ հավաքագրված տվյալները հասանելի են եղել սահմանափակ թվով մարդկանց՝ համակարգողին, հարցազրուցավարին և տվյալները մուտքագրող մասնագետին: Տվյալների արխիվները պաշտպանված են եղել ծածկագրով և պահվել են հուսալիորեն փակվող պահարանում: Հետազոտության ավարտից հետո էլեկտրոնային և տպագիր բոլոր տվյալները պահվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ փակվող սենյակում:

---

## **Տվյալների ներկայացում**

Տվյալները ներկայացված են աղյուսակների կամ գծապատկերների տեսքով: Որտեղ հնարավոր է, ներկայացված են չափը (n), հաշվարկված թվերը և 95% վստահության միջակայքերը (ՎՄ): Ընտրանքների միջև/մեջ վիճակագրորեն նշանակալի տարբերությունները գնահատվել են՝ նշելով ՎՄ-ի համընկնումները: Որոշ դեպքերում մեկ փոփոխականի արժեքները բավարար չեն եղել RDS-Analyst ծրագրում հաշվարկված թվեր ստանալու համար: Նման դեպքերի համար կատարվել է նշում հետևյալ կերպ՝ ^^: Թեև ներկայացված հաշվարկված թվերը խմբի համար կարող են համարվել ներկայացուցչական, որոշ փոփոխականների ոչ բավարար արժեքները կարող են սահմանափակել ճշգրիտ հաշվարկված թվերի ստացման հնարավորությունը: Որոշ դեպքերում ՎՄ-ները շատ լայն են ստույգ մեկնաբանություն տալու համար: Քանի որ հաշվարկված թվեր ստանալու և դրանք կշռելու համար RDS-Analyst ծրագրում վերլուծությունը կախված է ընդգրկման շղթաների ինտեգրվածությունից, ուստի բաց թողնված արժեքները կարող են անդրադառնալ կշռված թվերի մասնաբաժնի վրա:



## 5. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր մասնակցից կատարվել է արյան նմուշառում (5մլ երակային արյուն) ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի և Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու նպատակով: ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների որակը վերահսկելու համար բացասական արդյունքով պատահականորեն ընտրված նմուշների 10%-ը կրկնակի հետազոտվել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատորիայում ԻՖԱ մեթոդով 4-րդ սերնդի Ag-Ab թեստ-հավաքածուով: ԻՖԱ մեթոդով հետազոտության դրական արդյունքի դեպքում ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով կատարվել է հետազոտություն NEW LAV-BLOT 1 թեստ-հավաքածուով: Ախտորոշում ստացած մասնակիցներն անմիջապես ուղղորդվել են ստանալու անհրաժեշտ բուժում և խնամք: Հեպատիտ Բ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացվել է արագ թեստավորման մեթոդով HBsAg թեստ-հավաքածուներով, իսկ հեպատիտ Ց-ի վերաբերյալ հետազոտությունն անցկացվել է Anti-HCV ԻՖԱ թեստ-հավաքածուներով: Սիֆիլիսի վերաբերյալ հետազոտությունն անցկացվել է RPR թեստերով: Սիֆիլիսի նկատմամբ դրական արյան նմուշների կրկնակի հետազոտությունն անցկացվել է TPHA թեստերով:

### 5.1. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Հետազոտության տեղամասերում արյան նմուշները պահվել են 2-8°C-ում մինչև լաբորատոր հետազոտության համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ տեղափոխելը: Բոլոր նմուշները տեղափոխվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից տրամադրված պայուսակ-սառնարաններով (2-8°C) դրանց հավաքագրումից 24-48 ժամվա ընթացքում:

### 5.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հետազոտությունների արդյունքները կապակցվել են՝ օգտագործելով մասնակիցների կտրոնների հատուկ համարները, լաբորատոր համարները և տվյալների հավաքագրման ամսաթիվը: Հետազոտությունները կատարվել և արդյունքները տրամադրվել են անմիջապես հետազոտության վայրում (բացառությամբ սիֆիլիսի): Հետազոտության արդյունքները տրամադրվել են մասնակիցներին խորհրդատուի կողմից: Դրական արդյունքով մասնակիցները ստացել են ուղղորդման կտրոն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում հետագա հետազոտությունների համար: Մասնակիցները, որոնք ցանկություն են հայտնել ստանալու սիֆիլիսի վերաբերյալ իրենց հետազոտությունների արդյունքները, վերադարձել են հետազոտության տեղամաս հարցմանը մասնակցելուց մոտ մեկ շաբաթ անց:

## 6. ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հետազոտության հետ կապված սոցիալական վտանգները նվազեցնելու համար նախքան հետազոտությունների անցկացումը հանդիպումներ են կայացել ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի և շահագրգիռ կազմակերպությունների միջև հետազոտության ուղեցույցի վերջնական տարբերակը քննարկելու և դրա շուրջ համաձայնության գալու նպատակով: Այդ հանդիպումների արդյունքներն օգտագործվել են հետազոտության պլանավորման և իրականացման ժամանակ: Հետազոտության մասնակիցները տեղեկացվել են, որ մասնակցությունը կամավոր է, գաղտնիությունը՝ երաշխավորված, և իրենց ցանկությամբ այն կարող է դադարեցվել հետազոտության ցանկացած փուլում: Հետազոտության մանրամասն նկարագրությունից հետո բոլոր ընդգրկվողներից ստացվել է գրավոր տեղեկացված համաձայնություն: Նրանք նաև տեղեկացվել են, որ խրախուսում ստանալու համար պետք է մասնակցեն հետազոտության վարքագծային և կենսաբանական մասերին: Յուրաքանչյուր տեղամասում հետազոտության մասնակիցներին տրամադրվել են կոնտակտային տվյալներ հետազոտությանն առնչվող հարցերի դեպքում կապ հաստատելու համար: Մասնակիցները նաև տեղեկացվել են, թե ցանկության դեպքում երբ և որտեղ կարող են ստանալ իրենց հետազոտության արդյունքները:

Հարցազրույցները, նախա- և հետթեստային խորհրդատվությունը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը, հետազոտությունների արդյունքների տրամադրումը կատարվել են գաղտնիությունն ապահովող պայմաններում: Հետազոտության բոլոր տվյալների պահպանումը կազմակերպվել է պատշաճ ձևով, անձը բացահայտող տվյալներ չեն ներառվել հարցաշարերում և արյան նմուշառման ժամանակ լրացվող ձևաթղթերում: Հարցաշարերը, կենսաբանական նմուշները և արդյունքները կապակցվել են՝ օգտագործելով մասնակցի կտրոնի հատուկ համարը և լաբորատոր համարը: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի էթիկայի կոմիտեն հավանություն է տվել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների փաստաթղթերի փաթեթին:


## 7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Բնակչության թիրախային խմբերի շրջանում անցկացված վարքագծային տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների՝ ռիսկային վարքագծին առնչվող որոշ հարցերի տրված պատասխանները կարող են բացարձակ նույնությամբ չարտացոլել հարցման ենթարկվածի վարքագծային առանձնահատկությունները: Բոլոր մասնակիցների՝ ընդգրկման չափանիշներին համապատասխանությունը ապահովելու համար ընդգրկվողներն անցել են սկրինինգ խմբի հետ աշխատելու փորձ ունեցող սկրինների կողմից: Ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանող կամ արդեն մասնակցած անձից անձնակազմի անդամը վերցրել է կտրոնը և խնդրել նրան հեռանալ: Թեև ներկայացված հաշվարկված թվերը կարող են ներկայացուցչական համարվել խմբի համար, սակայն ցանցը կարող է չպարունակել կարևոր ենթախմբեր: Որոշ դեպքերում ՎՄ-ի սահմանները շատ լայն են ստույգ մեկնաբանություններ տալու համար: RDS-Analyst ծրագրում վերլուծությունը կախված է ընդգրկման շղթաների ինտեգրվածությունից, ուստի բաց թողնված արժեքները կարող են անդրադառնալ կշռված թվերի մասնաբաժնի վրա:


## 8. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր ընտրանքի չափը կազմում է 900, ներառյալ 12 սերմերը: Յուրաքանչյուր քաղաքում ընդգրկվել է 300 միգրանտ (գծապատկերներ 1, 2, 3):


**Գծապատկեր 2.** Միգրանտների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը, ք.Երևան, 2017-2018



**Գծապատկեր 3.** Միգրանտների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը, ք.Գյումրի, 2017-2018



**Գծապատկեր 4.** Միգրանտների ընտրանքի ընդգրկման գրաֆիկը, ք. Վանաձոր, 2017-2018



**8.1. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ**

Քաղաքաբնակ միգրանտների մեծամասնությունը 25 և բարձր տարիքի էր (աղյուսակ 6), և միայն 16%-ն էր 18-24 տարեկան: Միջին տարիքը կազմել է 32, մեղիանան՝ 31 (սահմաններ՝ 18-49): Միգրանտների մեծ մասը (57%) ուներ միջնակարգ կրթություն՝ բացառությամբ Գյումրիի միգրանտների (34%): Նմանապես նրանց մեծամասնությունը (57%) ամուսնացած էր՝ բացառությամբ Վանաձորի միգրանտների (43%): Արտերկրում աշխատելու միջին ժամանակահատվածը կազմել է հինգ տարի, մեղիանան՝ 4 տարի (սահմաններ՝ 1-32): Քաղաքաբնակ միգրանտների 90%-ից ավելին աշխատել է Ռուսաստանի Դաշնությունում: Հարցվածների մեծամասնությունը՝ մոտ 54%-ը, աշխատել և ապրել է մեծ քաղաքներում՝ բացառությամբ Վանաձորի միգրանտների, որոնց մեծ մասն աշխատել և ապրել է քաղաքներում: Ավելի քան 50%-ն աշխատել է շինարարության ոլորտում: Ամուսնացածների 85%-ը արտերկիր է մեկնել մենակ, առանց ընտանիքի:

**ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ, 2017-2018**

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
<b>Տարիք</b>								
18-24	192	16,2 (11,5-22,4)	43	15,8 (10,4-21,3)	49	14,3 (10,4-19,3)	100	36,3 (27,1-45,5)
25-34	352	40,8 (34,1-47,5)	122	40,7 (32,7-48,7)	132	46,6 (39,7-53,5)	97	30,8 (22,7-15,1)
35-44	228	25,1 (19,2-32,0)	74	25,2 (17,9-32,4)	89	25,9 (20,9-31,6)	65	23,1 (15,1-31,1)
45 և բարձր	122	17,8 (13,2-23,7)	54	18,2 (12,5-24,0)	30	13,2 (8,2-20,7)	38	9,8 (5,5-14,0)
<b>Տարիքային խումբ</b>								
≤24	192	16,2 (11,5-22,4)	43	15,8 (10,2-21,5)	49	14,3 (10,4-19,3)	100	36,3 (27,2-45,3)
≥25	701	84,8 (77,6-88,5)	250	84,1 (78,5-89,8)	251	85,7 (80,6-89,6)	200	63,7 (54,7-72,8)
<b>Կրթություն</b>								
Թերի միջ-նակարգ	75	7,1 (4,3-11,5)	18	6,8 (3,9-11,8)	39	15,7 (10,8-22,3)	18	5,0 (2,1-7,8)
Միջնակարգ	472	57,1 (50,1-63,9)	176	57,5 (49,8-64,8)	113	33,6 (27,7-40,1)	189	66,0 (57,1-74,9)
Միջին մաս-նագիտական	161	12,7 (8,7-18,2)	31	12,0 (7,7-18,1)	112	36,5 (30,0-43,6)	18	7,3 (2,6-12,0)
Թերի բարձ-րագույն	101	6,2 (3,7-10,3)	21	5,7 (3,1-10,3)	31	11,5 (7,9-16,3)	49	14,4 (8,3-20,5)
Բարձրա-գույն	84	16,7 (12,1-22,7)	54	18,0 (12,9-24,5)	5	2,6 (0,9-6,9)	26	7,4 (3,1-11,6)
<b>Ընտանեկան կարգավիճակ</b>								
Ամուրի	351	39,5 (32,6-45,6)	108	39,3 (32,1-47,0)	98	30,4 (24,6-36,9)	145	55,6 (46,8-64,5)
Ամուսնացած	489	57,1 (49,8-64,4)	173	57,4 (49,8-64,8)	168	57,5 (50,6-64,1)	148	42,7 (33,9-51,4)
Ամուսնա-լուծված	46	2,7 (1,5-5,1)	9	2,1 (0,9-4,7)	34	12,1 (8,3-17,3)	3	1,0 (0,0-2,5)
Քաղաքա-ցիական ամուսնություն	5	1,0 (0,3-3,6)	0	--	0	--	2	0,3 (0,0-0,7)
Այրի	2	0,01 (0,0-0,02)	3	1,1 (0,3-3,9)	0	--	2	0,3 (0,0-0,7)
<b>Վերջին 3 տարվա ընթացքում առնվազն 3 ամիս աշխատելու համար մեկնած երկրները</b>								
Վրաստան	30	8,5 (0,3-2,0)	2	0,5 (0,0-1,2)	22	7,1 (4,1-10,2)	6	1,3 (0,1-2,5)
Ռուսաստանի Դաշնություն	840	95,0 (90,8-97,3)	287	94,9 (91,4-98,4)	273	90,4 (86,4-94,3)	286	93,3 (88,3-98,2)
Ուկրաինա	11	2,8 (1,2-6,4)	8	2,9 (0,1-5,6)	3	1,9 (0,0-4,3)	0	--
Այլ	12	1,4 (0,3-5,4)	3	1,7 (0,0-3,8)	2	0,4 (0,0-1,0)	8	5,4 (0,7-10,1)
<b>Բնակավայրի տեսակը, որտեղ վերջին անգամ աշխատել է վերջին տարվա ընթացքում առնվազն 3 ամիս կամ ավելի</b>								
Մեծ քաղաք	424	53,7 (46,7-60,6)	151	56,6 (48,7-64,2)	167	53,8 (46,8-60,6)	107	35,9 (46,8-64,6)
Քաղաք	460	43,4 (38,5-52,4)	146	42,7 (35,2-50,6)	130	43,1 (36,5-50,0)	186	60,3 (52,5-68,1)
Գյուղ	10	0,7 (0,2-2,7)	2	0,7 (0,1-3,5)	2	1,7 (0,3-8,0)	7	3,8 (0,4-7,1)
Քիչ բնակեց-ված վայր	2	0,1 (0,03-0,6)	1	1,3 (0,2-8,9)	1	1,3 (0,2-8,9)	0	--

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
<b>Բնակավայրի տեսակը, որտեղ վերջին անգամ ապրել է վերջին տարվա ընթացքում առնվազն 3 ամիս կամ ավելի</b>								
Մեծ քաղաք	423	53,2 (46,2-60,1)	152	55,9 (48,0-63,6)	167	53,8 (46,8-60,6)	108	36,0 (28,1-43,9)
Քաղաք	452	43,7 (36,5-50,4)	143	40,7 (33,3-48,5)	130	43,1 (36,5-50,0)	183	59,4 (51,3-67,7)
Գյուղ	15	3,0 (1,2-7,7)	4	3,3 (1,2-9,0)	2	1,7 (0,3-8,0)	9	4,5 (1,1-8,0)
Քիչ բնակեցված վայր	2	0,1 (0,01-0,6)	1	1,3 (0,2-8,9)	1	1,3 (0,2-8,9)	0	--
<b>Վերջին տարվա ընթացքում առնվազն 3 ամիս կամ ավելի արված աշխատանքի տեսակը</b>								
Շինարարություն	509	57,4 (50,2-64,3)	156	59,8 (52,4-67,1)	179	55,0 (48,0-62,0)	174	53,6 (45,2-61,9)
Գյուղատնտեսություն	15	2,3 (1,0-5,1)	7	2,4 (0,4-4,2)	7	3,1 (1,2-7,9)	1	0,2 (0,1-0,3)
Առևտուր	130	9,8 (6,6-13,3)	31	9,7 (5,0-13,7)	75	26,6 (20,9-33,2)	24	6,8 (3,2-10,4)
Ծառայությունների ոլորտ	219	26,8 (21,2-34,2)	86	28,2 (21,5-35,6)	39	15,2 (9,9-22,7)	94	39,3 (31,3-47,4)
Այլ	20	3,6 (1,6-7,4)	0	--	0	--	0	--
<b>Զուգընկերն ուղեկցում է արտերկրում աշխատելիս (միայն ամուսնացածների համար)</b>								
Այո	73	14,8 (10,1-21,3)	32	20,4 (13,1-27,7)	29	16,2 (10,0-22,2)	12	8,7 (1,1-16,4)

## 8.2. ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Քաղաքաբնակ միգրանտների 99,8%-ը երբևէ ունեցել է սեռական հարաբերություն: Համարյա բոլոր քաղաքաբնակ միգրանտները Երևանումն բոլորը Գյումրիում ու Վանաձորում նշել են, որ երբևէ ունեցել են սեռական հարաբերություն (աղյուսակ 7): Մեծամասնությունն առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել 15-19 տարեկանում (64%): Միջին տարիքը և մեդիանան առաջին սեռական հարաբերության ժամանակ եղել է 18 (սահմանները՝ 11-45): Քաղաքաբնակ միգրանտների 69%-ն ունեցել է սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում (սկսած 67%-ից՝ Վանաձորում, մինչև 81%՝ Գյումրիում): Նրանցից միայն 32%-ն է օգտագործել պահպանակ:

Վերջին 30 օրվա ընթացքում սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը ամենացածրն է եղել Գյումրիի (17%), ամենաբարձրը՝ Վանաձորի միգրանտների շրջանում (43%), իսկ Երևանի միգրանտների շրջանում պահպանակի օգտագործումը կազմել է 36%:

**ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՔԱՂԱՔԱԲԵՆԱԿ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ**

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
<b>Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն</b>								
Այո	891	99,8 (98,9-99,9)	292	99,8 (99,0-100)	300	100	300	100
<b>Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ</b>								
≤ 15	120	21,8 (15,9-28,3)	64	22,8 (14,7-29,6)	3	0,7 (0,2-2,6)	17	10,5 (4,8-16,2)
15-19	583	64,3 (57,5-71,1)	187	64,5 (61,3-77,2)	186	60,6 (53,4-67,4)	171	78,7 (70,0-87,1)
≥ 20	181	13,9 (10,1-18,8)	42	12,6 (5,5-13,9)	107	38,6 (31,8-45,9)	13	10,9 (3,2-18,6)
<b>Սեռական հարաբերություններ վերջին 30 օրվա ընթացքում</b>								
Այո	67 1	99,9 (99,9-100)	221	67,4 (59,7-74,2)	242	81,4 (76,5-86,2)	208	63,0 (54,7-71,5)
<b>Պահպանակի օգտագործումը սեռական վերջին հարաբերության ժամանակ վերջին 30 օրում</b>								
Այո	206	31,6 (23,6-40,8)	76	36,4 (28,3-45,5)	35	17,1 (10,3-26,8)	95	43,2 (33,3-53,1)

**8.3. ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՄՇՏԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ**

Քաղաքաբնակ միգրանտների մեծ մասը (72%) սեռական հարաբերություն է ունեցել մշտական զուգընկերոջ հետ Հայաստանում, իսկ 37%-ը՝ արտերկրում: Մասնավորապես՝ Երևանում միգրանտների 73%-ը, Գյումրիում՝ 62%-ը և Վանաձորում՝ 55%-ը սեռական հարաբերություն են ունեցել մշտական զուգընկերոջ հետ Հայաստանում, իսկ արտերկրում՝ համապատասխանաբար 36%-ը, 59%-ը և 43%-ը (աղյուսակ 8): Հարցվածների մեծամասնությունն ունեցել է մեկ մշտական զուգընկեր վերջին տարվա ընթացքում Հայաստանում (միջինը՝ 1,4, մեդիանա՝ 1, սահմաններ՝ 1-12) և արտերկրում (միջինը՝ 1,5, մեդիանա՝ 1, սահմաններ՝ 1-7), սակայն Գյումրիում միգրանտների մոտ 30%-ը նշել է, որ ունեցել է 3-4 մշտական զուգընկեր Հայաստանում և արտերկրում: Մեկ մշտական զուգընկերոջ հետ վերջին մեկ տարվա ընթացքում սեռական հարաբերությունների միջին թիվը Հայաստանում կազմել է 71 (մեդիանա՝ 50, սահմաններ՝ 2-400) և արտերկրում՝ 89 (մեդիանա՝ 82, սահմաններ՝ 1-365), իսկ պահպանակների օգտագործման միջին թիվը Հայաստանում՝ 16 (մեդիանա՝ 5, սահմաններ՝ 0-250) և արտերկրում՝ 22 (մեդիանա՝ 10, սահմաններ՝ 0-240): Քաղաքաբնակ միգրանտների մեծ մասը նշել է, որ Հայաստանում և արտերկրում մշտական զուգընկերների հետ երբեմն է օգտագործում պահպանակ կամ երբեք չի օգտագործում: Որպես պահպանակ չօգտագործելու պատճառ նշվել է զուգընկերոջ նկատմամբ վստահությունը և հաճույքի նվազեցումը և՛ Հայաստանում, և՛ արտերկրում:



**ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՄՇՏԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ՝ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

		ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
		N = 900		N=300		N=300		N=300	
		n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
<b>Սեռական հարաբերություն մշտական զուգընկերոջ հետ</b>									
ՀՀ-ում	588	71,7 (65,0-77,6)	219	72,6 (66,1-79,1)	179	61,7 (55,1-68,0)	185	54,6 (46,4-62,6)	
Արտերկրում	427	37,4 (30,8-44,4)	110	36,2 (28,5-43,9)	177	58,7 (51,8-65,3)	136	42,9 (34,5-51,4)	
<b>Մշտական զուգընկերների թիվը</b>									
ՀՀ-ում	1	495	89,8 (84,3-93,6)	193	86,1 (73,5-93,2)	177	98,5 (93,7-99,6)	76	63,6 (53,1-74,4)
	2-4	85	9,5 (5,8-15,2)	29	13,5 (6,4-26,2)	2	1,5 (0,3-6,3)	38	28,7 (18,4-38,7)
	5 և ավելի	8	0,6 (0,1-1,8)	3	0,4 (0,0-2,9)	0	--	5	7,7 (1,3-14,1)
Արտերկրում	1	351	83,3 (72,7-90,3)	97	91,2 (81,9-96,0)	171	96,3 (90,0-98,7)	84	60,8 (48,4-73,3)
	2-4	74	16,5 (9,5-21,1)	20	8,7 (4,0-18,1)	6	3,7 (1,3-9,9)	48	32,7 (20,8-44,4)
	5 և ավելի	5	0,2 (0,0-0,6)	1	0,1 (0,0-0,6)	0	--	4	6,5 (0,0-14,8)
<b>Բոլոր մշտական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների միջին թիվը, մեդիանան, սահմանները</b>									
ՀՀ-ում	70,4, 50 (2-400)		69,8, 50 (2-400)		66,4, 55 (5-220)		70,5, 50 (2-300)		
Արտերկրում	88,8, 82 (1-365)		90,0, 70 (2-365)		113,4, 100 (15-270)		62,9, 40 (1-350)		
<b>Բոլոր մշտական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակների օգտագործման միջին թիվը, մեդիանան, սահմանները</b>									
ՀՀ-ում	15,8, 5 (0-250)		38,8, 31 (0-150)		5,2, 5 (0-50)		14,8, 0 (0-250)		
Արտերկրում	21,6, 10 (0-240)		51,9, 35 (2-240)		11,5, 10 (0-100)		21,5, 5 (0-200)		
<b>Մշտական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը</b>									
ՀՀ-ում	115	24,7 (17,6-33,5)	58	23,7 (13,9-37,5)	22	11,9 (6,5-21,1)	35	13,7 (8,8-18,7)	
Արտերկրում	158	44,6 (33,9-56,0)	53	52,5 (37,6-66,8)	30	24,7 (16,3-35,7)	75	53,5 (42,2-64,8)	
<b>Մշտական զուգընկերոջ հետ պահպանակի օգտագործման հաճախականությունը</b>									
<b>ՀՀ-ում</b>									
Միշտ	55	17,6 (11,3-26,6)	37	15,0 (7,2-28,5)	0	--	18	10,7 (4,9-16,5)	
Երբեմն	234	16,0 (11,3-22,0)	37	14,0 (7,6-24,4)	137	78,1 (68,0-85,7)	60	30,4 (22,6-38,3)	
Երբեք	302	66,3 (57,4-74,2)	150	71,0 (57,1-81,9)	42	21,9 (14,3-31,9)	110	58,9 (50,2-67,5)	
<b>Արտերկրում</b>									
Միշտ	95	39,3 (28,8-50,9)	47	48,3 (33,8-63,0)	0	--	48	36,3 (24,5-47,9)	
Երբեմն	221	28,1 (19,4-38,7)	28	14,6 (7,9-25,4)	143	84,5 (75,8-90,5)	50	34,4 (21,8-47,1)	
Երբեք	120	32,6 (23,0-43,8)	43	37,1 (23,7-52,8)	34	15,5 (9,5-24,2)	43	29,3 (19,4-39,2)	
<b>Մշտական զուգընկերոջ պահպանակ չօգտագործելու պատճառները</b>									
<b>ՀՀ-ում</b>									
Շատ թանկ է	0	--	0	--	0	--	0	--	
Ամաչում է գնել	3	0,2 (0,0-0,7)	0	--	0	--	2	2,0 (0,0-4,6)	

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
Դժվար է օգտագործել	2	0,1 (0,0-0,6)	0	--	0	--	2	1,1 (0,0-3,3)
Այնքան էլ հասանելի չէ	4	0,1 (0-0,3)	2	1,1 (0,0-3,2)	0	--	2	0,9 (0,0-1,8)
Նվազեցնում է հաճույքը	198	52,2 (33,3-68,1)	102	52,7 (31,5-73,0)	116	74,8 (63,8-83,4)	23	12,1 (5,3-18,9)
Ամաչում է զուգընկերոջը խընդրել օգտագործել այն	0	--	0	--	0	--	0	--
Վստահում է զուգընկերոջը	368	69,2 (48,0-84,4)	115	68,6 (42,2-86,8)	122	74,8 (64,7-82,8)	131	77,0 (68,0-85,9)
Զգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	8	0,4 (0,1-1,1)	0	--	4	1,2 (0,3-4,9)	4	2,9 (0,0-6,0)
Օգտագործում է հիիության կանխարգելման համար	81	7,5 (4,3-12,6)	7	1,0 (0,1-7,4)	72	48,1 (35,8-60,6)	2	0,7 (0,0-1,9)
<b>Արդերկրում</b>								
Շատ թանկ է	0	--	0	--	0	--	0	--
Ամաչում է գնել	1	0,1 (0-0,6)	0	--	0	--	2	2,0 (0,0-4,6)
Դժվար է օգտագործել	3	0,1 (0-0,6)	0	--	0	--	3	3,4 (0,2-6,7)
Այնքան էլ հասանելի չէ	5	0,1 (0-0,3)	0	--	0	--	2	1,5 (1,1-1,9)
Նվազեցնում է հաճույքը	163	50,8 (33,3-68,1)	22	48,8 (27,6-70,4)	119	73,3 (62,1-82,2)	22	21,9 (8,0-35,7)
Ամաչում է զուգընկերոջը խընդրել օգտագործել այն	1	0,1 (0-0,6)	1	5,5 (0,7-31,2)	0	--	0	--
Վստահում է զուգընկերոջը	209	61,8 (42,1-78,2)	39	61,5 (37,2-81,2)	117	65,1 (51,0-76,9)	53	57,4 (42,7-72,1)
Զգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	11	0,4 (0,2-1,2)	1	0,5 (0,0-1,9)	4	1,2 (0,3-4,9)	6	7,0 (0,0-14,3)

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
Օգտագործում է հղիության կանխարգելման համար	91	8,8 (5,3-14,4)	4	1,0 (0,1-7,4)	86	57,7 (46,0-68,7)	1	1,0 (0,6-1,4)

<sup>^</sup> Չուզընկեր, որի հետ եղել են սեռական հարաբերություններ նվազագույնը երեք ամիս վերջին տարվա ընթացքում

#### 8.4. ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Վերջին տարվա ընթացքում քաղաքաբնակ միգրանտների 29%-ն է ունեցել սեռական հարաբերություններ պատահական զուգընկերոջ հետ Հայաստանում, մինչդեռ 71%-ը սեռական հարաբերություններ է ունեցել պատահական զուգընկերոջ հետ արտերկրում (աղյուսակ 9): Քաղաքաբնակ միգրանտների մոտ 50%-ն ունեցել է 2 և ավելի պատահական զուգընկեր Հայաստանում (միջինը՝ 3,8, մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-30), իսկ 60%-ը և ավելին՝ 2 և ավելի պատահական զուգընկեր արտերկրում (միջինը՝ 5,1, մեդիանա՝ 3, սահմաններ՝ 1-180): Բոլոր պատահական զուգընկերների հետ վերջին տարվա ընթացքում սեռական հարաբերությունների միջին թիվը կազմել է 11,5 (մեդիանա՝ 5, սահմաններ՝ 1-200) Հայաստանում և 16,3 (մեդիանա՝ 7, սահմաններ՝ 1-210) արտերկրում: Բոլոր պատահական զուգընկերների հետ պահպանակների օգտագործումը կազմել է միջինը 7,1 (մեդիանա՝ 3, սահմաններ՝ 0-200) Հայաստանում և 11,4 (մեդիանա՝ 5, սահմաններ՝ 0-200) արտերկրում: Միգրանտների մեծամասնությունը Երևանում և Վանաձորում նշել է, որ օգտագործել է պահպանակ Հայաստանում պատահական զուգընկերոջ հետ վերջին հարաբերության ժամանակ, մինչդեռ Գյումրիում միայն 27%-ն է օգտագործել պահպանակ: Արտերկրում պատահական զուգընկերոջ հետ վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է Երևանի միգրանտների 85%-ը, մինչդեռ Գյումրիում՝ միայն 27%-ը, Վանաձորում՝ 38%-ը: Այնուհանդերձ Գյումրիում պատահական զուգընկերոջ հետ պահպանակ մշտապես օգտագործում է հարցման ենթարկվածների մոտ 15%-ը, Վանաձորում՝ մոտ 50%-ը: Որպես Հայաստանում պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառ միգրանտների 41%-ը նշել է հաճույքի նվազեցումը, 33%-ը՝ զուգընկերոջ հանդեպ վստահությունը, իսկ արտերկրում այդ պատճառների թվում են հաճույքի նվազեցումը՝ 41%, ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել՝ 33%:

**ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ՝ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր		
	N = 900		N=300		N=300		N=300		
	n	% (95% վՄ)	n	% (95% վՄ)	n	% (95% վՄ)	n	% (95% վՄ)	
<b>Սեռական հարաբերություն պատահական զուգընկերոջ հետ</b>									
ՀՀ-ում	218	29,2 (23,1-35,7)	97	29,1 (23,0-36,2)	7	2,9 (1,3-6,3)	114	33,2 (25,0-41,3)	
Արտերկրում	449	70,9 (64,2-76,8)	162	49,2 (41,7-56,7)	77	29,4 (22,9-36,9)	210	62,8 (54,7-70,9)	
<b>Պատահական զուգընկերների թիվը</b>									
ՀՀ-ում	1	60	44,6 (32,1-57,8)	30	42,5 (28,7-57,5)	5	51,2 (5,2-95,3)	25	24,7 (14,2-35,2)
	2-4	108	37,2 (26,2-49,8)	42	38,5 (25,7-53,0)	2	48,8 (4,7-94,8)	64	58,6 (47,1-70,2)
	5+	53	18,1 (11,3-27,9)	25	19,0 (11,3-30,3)	0	--	28	16,7 (8,6-24,7)
Արտերկրում	1	102	37,4 (21,4-56,7)	30	27,3 (15,6-43,3)	33	42,1 (3,6-93,3)	39	18,6 (11,1-26,1)
	2-4	214	57,4 (37,9-74,8)	80	46,1 (32,3-60,5)	37	57,9 (6,7-96,3)	97	49,9 (40,5-59,1)
	5+	137	5,2 (1,6-15,3)	52	26,6 (16,9-39,2)	0	--	78	31,5 (22,1-41,0)
<b>Բոլոր պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների միջին թիվը, մեդիանան, սահմանները</b>									
ՀՀ-ում	11,4, 5 (1-200)		6,3, 3 (1-112)		5,1, 5, (1-10)		14,1, 6 (1-200)		
Արտերկրում	16,3, 7 (1-210)		10,7, 7 (1-210)		16,5, 5, (1-120)		17,6, 3 (1-200)		
<b>Բոլոր պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակների օգտագործման միջին թիվը, մեդիանան, սահմանները</b>									
ՀՀ-ում	7,1, 5,3 (0-200)		5,12, 3 (1-78)		1,2, 2 (0-2)		7,4, 3 (0-200)		
Արտերկրում	11,4, 5 (0-200)		10,7, 6 (1-200)		5,4, 2 (0-40)		11,5, 5 (0-170)		
<b>Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը</b>									
ՀՀ-ում	170	78,3 (65,8-87,2)	76	79,0 (68,5-89,2)	4	27,1 (1,9-87,6)	90	61,6 (50,0-73,0)	
Արտերկրում	328	83,5 (75,3-89,3)	130	85,0 (74,1-92,3)	33	27,1 (1,9-87,6)	42	38,4 (26,9-50,0)	
<b>Պահպանակի օգտագործման հաճախականությունը պատահական զուգընկերների հետ</b>									
<b>ՀՀ-ում</b>									
Միշտ	128	68,3 (55,4-78,8)	67	75,9 (62,4-85,7)	1	15,3 (0,0-44,7)	60	48,1 (35,0-61,2)	
Երբեմն	54	14,3 (8,0-21,2)	12	9,7 (4,3-20,8)	6	84,7 (55,3-100)	36	32,4 (21,0-43,7)	
Երբեք	36	17,4 (9,3-30,0)	17	14,3 (7,3-26,2)	0	--	19	19,5 (10,5-28,6)	
<b>Արտերկրում</b>									
Միշտ	223	76,1 (67,2-83,2)	115	76,5 (61,6-86,8)	4	5,0 (0, 9,9)	104	42,8 (33,6-51,5)	
Երբեմն	153	13,5 (8,3-21,1)	22	12,0 (4,8-26,8)	69	90,4 (84,5-96,5)	62	38,2 (28,5-48,4)	
Երբեք	62	10,4 (5,9-17,7)	19	11,5 (5,2-23,2)	4	4,6 (1,0-8,1)	39	19,0 (11,8-26,2)	
<b>Պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակ չօգտագործելու պատճառները</b>									
<b>ՀՀ-ում</b>									
Շատ թանկ է	0	--	0	--	0	--	0	--	
Ամաչում է գնել	2	0,3 (0-2,3)	0	--	0	--	2	1,3 (0,0-4,0)	

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
Դժվար է օգտագործել	1	0,1 (0-0,1)	0	--	0	--	1	0,1 (0,0-0,1)
Այնքան էլ հասանելի չէ	2	0,1 (0-1,1)	1	2,3 (2,3-2,3)	0	--	1	0,5 (0,4-0,7)
Նվազեցնում է հաճույքը	23	41,3 (17,2-70,5)	9	42,7 (15,7-74,9)	6	10,2 (3,2-17,4)	8	7,7 (1,4-14,0)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել այն	22	27,3 (9,2-58,3)	9	27,3 (7,7-62,8)	2	11,1 (0,2-89,7)	11	6,7 (2,1-11,2)
Վստահում է զուգընկերոջը	30	33,0 (12,1-63,7)	13	34,1 (11,0-68,5)	1	25,7 (0,4-96,4)	16	12,9 (4,2-21,7)
Զգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	10	2,0 (0,7-6,4)	1	0,6 (0,6-0,6)	1	37,6 (0,8-97,8)	8	9,0 (2,5-15,6)
Օգտագործում է հիիության կանխարգելման համար	3	1,1 (0,3-2,0)	0	--	3	36,8 (1,2-96,5)	0	--
<b>Արդերկրում</b>								
Շատ թանկ է	0	--	0	--	0	--	0	--
Ամաչում է գնել	3	0,3 (0-2,3)	0	--	1	1,1 (0-3,9)	2	1,9 (0,0-0,1)
Դժվար է օգտագործել	2	0,1 (0-0,1)	1	0,4 (0,0-3,7)	0	--	1	0,1 (0,0-0,1)
Այնքան էլ հասանելի չէ	18	0,1 (0-1,1)	2	13,7 (13,7-13,7)	14	19,0 (8,1-29,9)	2	1,2 (0,0-3,4)
Նվազեցնում է հաճույքը	80	41,3 (17,2-70,5)	12	42,7 (15,7-74,9)	51	74,9 (64,4-85,7)	17	12,9 (2,3-23,4)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել այն	35	27,3 (9,2-58,3)	12	42,7 (7,7-62,8)	4	11,1 (0,2-89,9)	19	14,6 (5,6-23,3)
Վստահում է զուգընկերոջը	37	26,3 (8,1-58,9)	7	27,3 (7,3-64,0)	3	25,7 (0,4-96,4)	27	30,6 (16,6-44,8)
Զգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	14	1,5 (0,4-5,8)	1	1,1 (1,1-1,1)	5	37,5 (0,8-97,8)	8	9,0 (2,5-15,6)
Օգտագործում է հիիության կանխարգելման համար	18	1,1 (0,3-4,0)	0	--	13	36,8 (1,2-96,5)	5	3,3 (0,0-7,3)

^ Զուգընկեր, որը հարցվածի կինը չէ՝ անկախ նրանից քաղաքացիական, թե գրանցված ամուսնություն է:

## 8.5. ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԿՈՄԵՐՑԻՈՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ

Քաղաքաբնակ միգրանտների 12%-ը վերջին տարվա ընթացքում սեռական հարաբերություն է ունեցել կոմերցիոն զուգընկերոջ հետ Հայաստանում (աղյուսակ 10), իսկ 13%-ը՝ արտերկրում: Հարցման ենթարկվածների 11%-ը Երևանում, 12%-ը Գյումրիում և 18%-ը Վանաձորում նշել են, որ սեռական հարաբերություն են ունեցել կոմերցիոն զուգընկերոջ հետ Հայաստանում, համապատասխանաբար 12%, 27% և 16%-ը սեռական հարաբերություն են ունեցել կոմերցիոն զուգընկերոջ հետ արտերկրում: Հարցման ենթարկվածների 57%-ն ունեցել է 2-4 կոմերցիոն զուգընկեր (միջինը՝ 3,2, մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-30) Հայաստանում և 69%-ը՝ արտերկրում (միջինը՝ 3,4, մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-40): Միգրանտների մեծամասնությունը Երևանում (84%) և Գյումրիում (71%) ունեցել է 2-4 կոմերցիոն զուգընկեր Հայաստանում: Վանաձորում միգրանտների 44%-ը Հայաստանում ունեցել է մեկ կոմերցիոն զուգընկեր: Արտերկրում քաղաքաբնակ միգրանտների 69%-ն ունեցել է 2-4 կոմերցիոն զուգընկեր: Համապատասխանաբար 67%-ը Երևանում, 48%-ը Գյումրիում և 44%-ը Վանաձորում ունեցել են 2-4 կոմերցիոն զուգընկեր արտերկրում: Վերջին տարվա ընթացքում մեկ կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների միջին թիվը կազմել է 5,4 (մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-100) Հայաստանում և 5,1 (մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-100)՝ արտերկրում: Վերջին տարվա ընթացքում բոլոր կոմերցիոն զուգընկերների հետ պահպանակների օգտագործման միջին թիվը կազմել է 5 (մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-100) Հայաստանում և 4,9 (մեդիանա՝ 2, սահմաններ՝ 1-100)՝ արտերկրում:

Վերջին տարվա ընթացքում Հայաստանում կոմերցիոն զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է հարցվածների 73%-ը, արտերկրում՝ 72%-ը: Համապատասխանաբար 98%-ը Երևանում և 96%-ը Վանաձորում նշել են կոմերցիոն զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործելու մասին, մինչդեռ Գյումրիում այդ մասին նշել է ընդամենը 55%-ը: Հայաստանում կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ մշտապես պահպանակ օգտագործել է հարցվածների 95%-ը, ընդ որում Երևանի միգրանտների՝ 98%-ը, Վանաձորի միգրանտների՝ 95%-ը, և Գյումրիի միգրանտների՝ ընդամենը 28%-ը: Արտերկրում կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ մշտապես պահպանակ օգտագործել է հարցվածների 90%-ը, ընդ որում Երևանի միգրանտների՝ 97%-ը, Վանաձորի միգրանտների՝ 88%-ը, և Գյումրիի միգրանտների՝ ընդամենը 34%-ը:

Պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառն է՝ Հայաստանում, և՛ արտերկրում նշվել է հաճույքի նվազեցումը (91%):

**ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԿՈՄԵՐՑԻՈՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ՝ ՀԵՏ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

		ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
		N = 900		N=300		N=300		N=300	
		n	% (95% վս)	n	% (95% վս)	n	% (95% վս)	n	% (95% վս)
<b>Սեռական հարաբերություն կոմերցիոն զուգընկերների հետ</b>									
ՀՀ-ում		121	12,0 (8,1-17,3)	37	11,4 (7,5-17,1)	38	12,4 (9,2-15,6)	46	17,9 (11,3-24,5)
Արտերկրում		159	12,6 (8,7-18,0)	37	11,7 (7,6-17,6)	77	27,1 (21,1-33,2)	45	15,9 (9,8-21,9)
